» տիրեցին Եգիպտոսի երկրին հիմ. 564
»(1168–9 Փրկչին), ամենուն ծանօթ
» տազնապք եկան այն ատեն Յեգիպտոս
» բնակող Հայոց վրայ. իրենց պատրիարքն
» և կրօնաւորք՝ մեր յիշեալ վանքէն վռին-
» տուեցան, զոներն պատեցան գոցուե-
» ցան, և ոչ ոք համարձակէր մօտենալու
» ամայացեալ եկեղեցիներուն »։

Եգիպտոսի տիրողն էր հռչակաւոր Սա-
լահէտտինն՝ Հալպայ և Դամասկոսի Նու-
րէտտին սուլտանին հրամանաւ. և զի ազ-
գաւ Քուրդ էր նա, Աբուսահլ անոր զօր-
քերն այլ Քուրդ կոչէ, որոց գինակից էին
և Ղուզք կամ Ղոզք։ Իսկ Թուականն՝ որ
ստոյգ է և նոյն իր պատմութեան սկզբան
յիշածին հետ, յայտնէ մեր վերը ըսած
շփոթութիւնը՝ եկեղեցւոյ շինութեանն և
ամայութեան։

Այս ատենի Հայոց եպիսկոպոսին՝ զոր
նա պատրիարք կոչէ, յայտնի չէ անունն.
անկէ առաջ մեզ ծանօթ եպիսկոպոսն է
Անանիա, 30 տարի մ'առաջ վախճանած։

« Այգեստանն ի կալուած տրուեցաւ
» Ֆաքի ալ–Պահա Ալի անուն դամասկաց-
» ւոյ (գիտնական անձ մի). սա Հայոց
» համար շնորհեց Յովհ. Մկրտչի եկեղե-
» ցին, որ շինուած էր ամբիծ Տիրամօր